ՀՈՒՆՎԱՐ-ՕԳՈՍՏՈՍ **2020**

**JANUARY-AUGUST**



# ՏԵՂԵԿԱԳԻՐ
# NEWSLETTER

Հայկական Կարմիր խաչի ընկերություն
Armenian Red Cross Society
Պարոնյան 21/1 Paronyan
Հայաստան, Երևան, 0015, Yerevan, Armenia

www.redcross.am
redcross@redcross.am



## ԱՐՁԱԳԱՆՔ ՔՈՎԻԴ-19 ՀԱՄԱՎԱՐԱԿԻՆ

2020 թվականի մարտի 16-ին Հայաստանի Հանրապետությունում Կառավարության որոշմամբ հաստատվեց արտակարգ դրություն՝ պայմանավորված աշխարհում Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից Քովիդ-19 համավարակի հայտարարմամբ:

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը (ՀԿԽԸ)՝ իր 11 մարզային, մեկ տարածաշրջանային և 52 համայնքային մասնաճյուղերի ցանցով, փորձառու և նվիրված անձնակազմով, տարեկան կտրվածքով մոտ 3000 կամավորներով COVID-19 արձագանքի գործողություններում աջակցող կառույց է պետական մարմիններին՝ մարդասիրական ոլորտում:

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը ներգրավված է ՀՀ փոխվարչապետի հովանու ներքո ստեղծված ազգային արձագանքման համակարգում: Արտակարգ դրության առաջին իսկ օրվանից ՀԿԽԸ-ն Պարետատան, ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ Առողջապահության, ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունների, ՀՀ բոլոր մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի հետ համագործակցությամբ և համակարգմամբ, իրականացնում է գործառույթներ, որոնք ուղղված են խոցելի խմբերի կարիքներին համապատասխան արձագանքմանը:

Ստեղծված իրավիճակին արագ և արդյունավետ արձագանքելու համար ՀԿԽԸ-ն անհապաղ մշակեց կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ արձագանքի պլաններ, նախաձեռնեց տեղական և միջազգային ռեսուրսների մոբիլիզացիա, հավաքագրեց և վերապատրաստեց 1500 կամավորի:

ՀԿԽԸ արձագանքը մշակվել է՝ հիմնվելով Ստեփանավանի տարածքային մասնաճյուղում գործող "Արտակարգ իրավիճակների արձագանքման և հումանիտար աշխատանքների համակարգման" կենտրոնի կարողությունների վրա, որի տեխնիկական բազան թույլ է տալիս իրականացնել աղետների ռիսկի բազմակողմանի ուսումնասիրություն և արագ ու արդյունավետ արձագանքման սցենարների մշակում:

Քովիդ-19 համավարակի հայտարարումից անմիջապես հետո մշակվել են աղետի զարգացման սցենարները և անհրաժեշտ արձագանքը, քարտեզագրվել են Հայաստանի ամբողջ տարածքում Հայկական Կարմիր խաչի հնարավորությունները՝ կամավորների, տրանսպորտի և կապի, պահեստների, օգնության կարիք ունեցող շահառուների բազան, ճշտվել են արտակարգ իրավիճակում կամավորների առաջնային գործողությունները և այլն:

## RESPONSE TO COVID-19 PANDEMIC

On 16 March, 2020, the RA Government declared a State of Emergency in the country, due to the Covid-19 pandemic announced by World Health Organization.

The Armenian Red Cross Society (ARCS), with its network of 11 regional, one territorial and 52 community branches, experienced staff, and approximately 3,000 volunteers serves as a supporting organization to the government agencies in the humanitarian field during COVID-19 response operations.

The Armenian Red Cross Society is involved in the national response system created under the auspices of the RA Deputy Prime Minister. From the very first day of the state of emergency, the ARCS, in coordination and cooperation with the Ministry of Labor and Social Affairs, the Ministry of Health, the Ministry of Territorial Administration and Infrastructure, all the regional administrations and the Yerevan Municipality, performs functions aimed at responding to the needs of vulnerable groups.

In order to respond quickly and effectively to the situation, ARCS immediately developed short-term, mid-term and long-term response plans, initiated the mobilization of local and international resources, recruited and trained 1,500 volunteers.

The ARCS response was developed based on the capabilities of "Emergency Response and Humanitarian Coordination Center" ARCS Stepanavan Territorial Branch, the technical base of which allows it to conduct comprehensive disaster risk studies and develop rapid and effective response scenarios.

Immediately after the announcement of the Covid-19 epidemic, disaster development scenarios and the necessary response were developed, the capabilities of the Armenian Red Cross throughout Armenia were mapped: the database of volunteers, transport and communications, warehouses, beneficiaries in need, the priority actions of volunteers in the emergency situation were clarified, etc..

## Ռիսկի հաղորդակցություն և հանրային իրազեկում

Մարտի 16-ից՝ Քովիդ-19 համավարակի հայտարարման առաջին իսկ օրվանից, ՀԿԽԸ-ի կողմից հավաքագրված և պատրաստված շուրջ 1500 կամավորները պարբերաբար Հայաստանի քաղաքային և գյուղական համայնքներում տարածել են տեղեկատվական թերթիկներ և բնակչության շրջանում իրականացրել իրազեկման աշխատանքներ: Վարակից պաշտպանվելու վերաբերյալ իրազեկող թերթիկները շահառուներին են տրամադրվել նաև մարդասիրական օգնության փաթեթի հետ միասին, տրվել են նաև մարզպետարաններին և ՏԻՄ-երին, գործընկեր կազմակերպություններին:

Հաշվի առնելով Հայաստանում Քովիդ-19 համավարակի տարածման շարունակական աճը, ՀՀ Վարչապետի աշխատակազմի հետ համագործակցությամբ և խորհրդակցությունների արդյունքում, Հայկական Կարմիր խաչի ընկերությունը (ՀԿԽԸ) հանրային իրազեկման քարոզարշավ սկսեց հանրապետության ամբողջ տարածքում, հատկապես ուշադրության կենտրոնում պահելով բակերը և հարակից վայրերը, որտեղ մարդիկ չեն կրում դիմակներ և չեն պահպանում սոցիալական հեռավորություն:

Հունիսի 15-ից Հայկական Կարմիր խաչի ընկերության կամավորները շրջեցին մարդաշատ տարածքներում, բակերում և հանրային տրանսպորտում՝ բաժանելով իրազեկման թերթիկներ, բնակչությանը կրկին հիշեցնելով  դիմակներ կրելու, սոցիալական հեռավորություն պահելու, Քովիդ-19 վարակից պաշտպանվելու կանոնները պահպանելու կարևորության մասին, տրամադրելով դիմակ և ձեռնոց, նաև՝ ալկոգել: ՀԿԽԸ կամավորները իրազեկող թռուցիկներ, պաստառներ փակցրեցին շքամուտքերում, գովազդային տախտակների, սյուների, մեքենաների վրա, Մետրոպոլիտենում:



Իրազեկման արշավն իրականացվեց Երևանի բոլոր վարչական շրջաններում և մարզերում, բաժանվեց մոտ 450 000 պաշտպանիչ միջոց՝ դիմակ, ձեռնոց և ալկոգել:

Հուլիսի 3-ից Երևանում, իսկ 9-ից՝ մինչև հուլիսի 15-ը մարզկենտրոններում ժամը 17:00-ից 20:00-ը գործում էին տեղեկատվական տաղավարներ, որտեղ Հայկական Կարմիր խաչի ընկերության կամավորները հանրությանն իրազեկում էին Քովիդ -19 վարակից պաշտպանվելու վարքականոնների մասին, տրամադրում դիմակ, ձեռնոց և ալկոգել:

Արշավի նպատակն էր հանրության ուշադրության կենտրոնում պահել անվտանգ վարվելակերպի կանոնների պահպանման կարևորությունը, քանի որ արդեն 3 ամսից ավելի շարունակվող համավարակի պայմաններում մարդկանց զգոնությունը թուլանում է և անհրաժեշտ է իրազեկման տարբեր ձևաչափեր կիրառել:

## Risk communication and public awareness

From 16 March, the very first day of Covid-19 pandemic in Armenia, 1500 volunteers, trained by the ARCS, have been periodically distributing information leaflets in urban and rural communities of Armenia, implementing awareness activities among the population. The leaflets on protection against infection are provided to the beneficiaries together with the humanitarian aid packages, were handed over the regional administrations, llocal self-government bodies, partner organizations.

Taking into account the continuous growth of Covid-19 epidemic in Armenia, the Armenian Red Cross Society (ARCS), in consultation and cooperation with the Prime Minister's Office, launched a public awareness campaign throughout the country, focusing on yards and nearby areas where people do not wear masks and do not maintain social distance.

Taking into consideration the fact that the numbers of infected people by Covid-19 in Armenia, continued to rise, a public awareness campaign was implemented in all over the country, with the joint initiative of the RA Prime Minister office and Armenian Red Cross Society. According to the analysis, the most dangerous sites are the yards and nearby areas, where people do not wear masks and do not keep a social distance. Starting from 15 June, Armenian Red Cross Society volunteers walk around the crowded areas, yards and public transport, distributing information materials, and reminding people about the importance of wearing masks, keeping social distance, and following the rules of protection from Covid-19, providing masks, gloves and



also hand sanitizers. ARCS volunteers attach leaflets and posters in the entrances, on billboards, columns, cars, inside the Subway.

From July 3 in Yerevan, and in regions from July 9 to July 15, information booths operated from 5:00 pm to 8:00 pm, where the volunteers of the Armenian Red Cross Society informed the public about the rules of protection against Covid-19 infection, provided  masks, gloves and alchogel.

The aim of the campaign was to keep the public vigilant, stress the importance of following the rules of safe behavior, because of the epidemic, which has been going on for more than 3 months, and people's vigilance is weakening; so different formats of public awareness need to be applied.

**Մարտի 16-ից մինչև հունիսի 30-ը տարածվել է 450 000 տպագիր տեղեկատվական նյութ: Նույն նյութերը տարածվել են նաև առցանց տարբերակով՝ ՀԿԽԸ սոցիալական մեդիայի էջերի միջոցով: Ռիսկի հաղորդակցման բոլոր նյութերն ու համայնքների ներգրավման ռազմավարությունները հաշվի են առնում ընտանեկան բռնության և երեխաների պաշտպանության հարցերը, հաշմանդամություն ունեցող անձանց և փախստականների հետ աշխատանքի նրբությունները՝ հաշվի առնելով միֆերն ու ապատեղեկատվությունը, որպեսզի ռիսկի հաղորդակցման հետագա մոտեցումները ձևավորվեն դրանց համապատասխան: Նյութերի բովանդակությունը մշակվել է՝ ըստ Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի և Առողջապահության համաշխարհային կազմակերպության խորհուրդների:**

## Հումանիտար աջակցություն

**Հայկական Կարմիր խաչի ընկերությունը, մարտ-հունիս ամիսների ընթացքում, ըստ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից սահմանած պարենային ապրանքների և պաշտպանական միջոցների մեկ ամսվա համար նախատեսված նվազագույն զամբյուղի, սննդով և հիգիենիկ պարագաներով աջակցել է Քովիդ-19 համավարակով պայմանավորված առավել խոցելի 24430 անձի՝ հանրապետության ամբողջ տարածքում, հասանելի լինելով 925 քաղաքային և գյուղական համայնքներից 792-ում:**

Մարդասիրական օգնության փաթեթները Հայկական Կարմիր խաչի ընկերության կամավորները հասցնում են շահառուների տներ՝ այդ կերպ պաշտպանելով նրանց վարակից: Աջակցությունը շարունակական է:

Շահառուներն են՝ միայնակ և անժառանգ կենսաթոշակառուներ, հաշմանդամություն ունեցող անձինք, սիրիահայեր, մանկատան շրջանավարտներ, տուն ինտերնատների շահառուներ, ինքնամեկուսացվածների, ցուցումով ինքնամեկուսացվածներ, անհայտ կորածների ընտանիքներ, ականներից տուժածներ, բազմազավակ և խոցելի ընտանիքներ:



Մարդասիրական աջակցությունը տրամադրվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից տրված ցուցակներով:

## Հոգեբանական կենտրոններ և Թեժ գիծ

Արտակարգ ռեժիմով՝ ՀՀ Առողջապահության նախարարության հետ համագործակցությամբ, շարունակում են գործել Հայկական Կարմիր խաչի ընկերության Սոցիալ-հոգեբանական աջակցության 2 կենտրոնները, որտեղից հոգեբանները սոցիալ-հոգեբանական աջակցություն են տրամադրում անհանգստություններ ունեցող քաղաքացիներին, այդ թվում՝ մեկուսացված անձանց:

The awareness campaign has been carried out in all the administrative districts of Yerevan, around 450000 items of protection (masks, gloves and hand sanitizers) have been distributed.

**450000 printed information materials have been distributed since March 16 till June 30. The same materials were also posted and shared online through the ARCS social media pages. All risk communication materials and community engagement strategies take into account the issues of domestic violence, child protection, and nuances when dealing with people with disabilities and refugees. Myths and misinformation are also taken into consideration so that further approaches to risk communication can be tailored accordingly. The content of the materials was developed based on the recommendations of Red Cross and the International Federation of Red Crescent Societies and the World Health Organization.**

## Humanitarian aid

**From March to June, the Armenian Red Cross Society provided the most vulnerable 24430 people throughout the country with food and hygiene items, corresponding to the minimum essential food basket stated by the Ministry of Labor and Social Affairs of the Republic of Armenia. Thus, the aid was available in 792 out of 925 urban-rural communities.**

Humanitarian aid packages are delivered by the volunteers of the Armenian Red Cross Society to the beneficiaries' homes, thus protecting them from infection. The assistance is continuous.

The beneficiaries are lonely and childless pensioners, persons with disabilities, Syrian-Armenians, orphanage graduates, beneficiaries of nursing homes, self-isolated people, people self-isolated by instruction, families of missing persons, mine victims, multi-child and vulnerable families.



The humanitarian assistance is provided based on the lists of beneficiaries provided by the RA Ministry of Labor and Social Affairs.

## Psychological Centers and Hotline

In cooperation with the Ministry of Health of the Republic of Armenia, the two centers of Social-Psychological Support of the Armenian Red Cross Society continue to operate in emergency mode, from where psychologists provide social-psychological support to citizens with anxiety, including isolated persons.



**ՀԿԽԸ Թեժ գծերի հեռախոսահամարներն են**
**+374 60 625069**
**+374 60 627070**

**Մարտի 16-ից օգոստոսի 12-ը, Հայկական Կարմիր խաչի ընկերության են Թեժ գծի հեռախոսահամարներով ստացվել է 12915 զանգ Երևանից և բոլոր մարզերից, որից 70 տոկոսը՝ սոցիալ-հոգեբանական աջակցության, 26 տոկոսը՝ զուտ հոգեբանական աջակցության, և 4 տոկոսը՝ տեղեկատվության տրամադրման հարցերով:**

Բնակչության հետ հետադարձ կապը հնարավորություն է տալիս հայտնաբերելու դժվար իրավիճակում հայտնված մարդկանց, որոշելու նրանց կարիքները և կազմակերպելու, որ կամավորներն այցելեն նրանց և օգնեն աջակցության կարիք ունեցող տարեցներին ու հաշմանդամություն ունեցող անձանց կենցաղային հարցերում, այդ թվում՝ գնումներ կատարելու հարցում: Այս ընթացքում կամավորներն այցելել և օգնել են մոտ 500 անձի: Դիմողների, հատկապես՝ վարակվածների և մեկուսացվածների հետ տարվող հոգեբանական աշխատանքը ուղղված է հիմնականում անձի հոգեբանական վիճակի կայունացմանը, ինչպես նաև մեկուսացման և սոցիալական շփումների սահմանափակման կանոնների պահպանմանը, ինչն իր հերթին նպաստում է վարակի տարածման կանխմանը: Դիմողների հետ աշխատանքը տարվում է հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները, սեռը և ընտանեկան կարգավիճակը:

## Տնային խնամք

Covid -19 համավարակի օրերին Հայկական Կարմիր խաչի ընկերության տնային խնամքի ծառայությունը նույն ռեժիմով շարունակել է իր աշխատանքը:

Լոռու և Շիրակի մարզերում տնային խնամք է ստանում ամսվա կտրվածքով շուրջ 100 շահառու:

Տնային խնամքի անձնակազմը այցերի ժամանակ իրականացրել է շահառուների տների ախտահանում և իրազեկում:

Տնային խնամքի մոդելը ներդրվել է նաև Վայոց ձորի մարզում, որտեղ, տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցությամբ իրականացված գնահատման հիման վրա արդեն ընտրվել է 30 շահառու՝ հետագայում ծառայության մեջ ներգրավվելու նպատակով:

Բոլոր երեք մարզերի տնային խնամքի թվով 258 շահառուներին բաշխվել են սննդային և հիգիենիկ փաթեթներ:



**ARCS hotline telephone numbers are**
**+374 60 625069**
**+374 60 627070**

**From March 16 to August 12, the Armenian Red Cross Society has received 12915 calls from Yerevan անդ from all the regions of Armenia, from which 70% for social and psychological support, 26% for purely psychological support, and 4% for information issues.**

Feedback to the population provides an opportunity to identify people in difficult situations, determine their needs, arrange for volunteers to visit them, and assist the elderly and people with disabilities with household issues, including shopping. The volunteers have visited and helped about 500 people during this time. The psychological work with the applicants, especially the infected and the isolated, is mainly aimed at stabilizing the psychological state of the person, as well as at observing the rules of isolation and restriction of social contacts, which in turn helps to prevent the spread of the infection. The work with the applicants is carried out taking into account the age peculiarities, gender and marital status.

## Home care service

During the days of the Covid-19 epidemic, the home care service of the Armenian Red Cross continued its work in the same mode.

In Lori and Shirak regions, about 100 beneficiaries receive home care per month.

During the visits, disinfection and information activities have been carried out by the home care staff in beneficiaries' houses.

The home care model was also introduced in Vayots Dzor region, where, based on an evaluation conducted in cooperation with local self-government bodies, 30 beneficiaries have already been selected to be involved in the service in the future.

The packages of food and hygiene items were distributed to 258 home care beneficiaries in all three regions.

## Գյումրու շուրջօրյա խնամքի կենտրոն

Մայիսի 1-ից Գյումրու շուրջօրյա խնամքի կենտրոնի կառավարումը ստանձնել է Հայկական Կարմիր խաչի ընկերությունը և այդ օրվանից, ծառայությունների որակի բարձրացման նպատակով, սահմանվել է շուրջօրյա հերթափոխ, այսուհետ կենտրոնի 6 մասնաշենքերից յուրաքանչյուրն ունի շուրջօրյա խնամող:

Քովիդ-19 համավարակով պայմանավորված, շահառուների ելումուտը սահմանափակելու նպատակով, մայիսի 14-ին կազմակերպվել է սրտաբանի, վնասվածքաբանի և ակնաբույժի այց խնամքի կենտրոն: Իրականացվել է 42 շահառուի զննում և խորհրդատվություն:

Հիմք ընդունելով համավարակային իրավիճակը՝ Գյումրու շուրջօրյա խնամքի կենտրոնը մայիսի 21-ից անցել է աշխատանքային փակ ռեժիմի: Շուրջօրյա հերթապահում են 6 խնամող, 2 բուժքույր, 2 մատուցող, խոհանոցի աշխատողը և կաթսայատան պատասխանատուն:



Հայկական Կարմիր խաչի ընկերությունը՝ «Իմ քայլը» հիմնադրամի հետ համագործակցության արդյունքում և ֆինանսավորման շնորհիվ, հունիս ամսից Գյումրու շուրջօրյա խնամքի կենտրոնում հնարավորություն ունի կենտրոնի խնամառուների համար կազմակերպելու ատամնաբուժական ծառայություններ (բուժում, պրոթեզավորում և օժանդակ այլ միջամտություններ): Այս նախաձեռնությունը շատ կարևոր է խնամառուների առողջական վիճակի և, հետևաբար, կյանքի որակի բարելավման համար:

Խնամքի կենտրոնի անձնակազմը և շահառուները պարբերաբար անցնում են են Քովիդ -19-ի տեստավորում: Հուլիս ամսվա ընթացքում կենտրոնում տեղի ունեցավ վարակի բռնկում, վարակը հաստատվեց 56 շահառուի և 16 աշխատակցի մոտ: Մահացավ 5 տարեց, որից 2-ը կյանքի հետ անհամատեղելի քրոնիկական ծանր հիվանդություններով, 3-ը՝ ուղեկցող քրոնիկական ծանր հիվանդություններով:

Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի Շիրակի մասնաճյուղի հետ համագործակցությամբ կենտրոնում իրականացվեցին հակահամաճարակային միջոցառումների, ինչի շնորհիվ հնարավոր եղավ հնարավորինս սահմանափակել վարակի տարածումը:

Օգոստոս ամսվա սկզբին արդեն Գյումրու շուրջօրյա խնամքի կենտրոնում հիվանդներ չկային:

## Gyumri 24-hour Care Center

Since May 1, the Armenian Red Cross Society has been managing "Gyumri 24-hour Care Center" and from that day, in order to improve the quality of services, a 24-hour shift has been established, from now on each of the 6 buildings of the center has a 24-hour care service.

A visit to a cardiologist, traumatologist and ophthalmologist was organized on May 14 to limit, to reduce the contact of beneficiaries due to the Covid-19 epidemic. 42 beneficiaries were examined and consulted.

Based on the epidemic situation, Gyumri 24-hour Care Center has switched to closed working mode since May 21. 6 caretakers, 2 nurses, 2 waiters, the kitchen worker and the person in charge of the boiler house are on duty around the clock.



"My Step Foundation's" support program for the solution of dental problems of the elderly has been launched at Gyumri 24-hour Care Center. Due to the funding from the foundation, ARCS has the opportunity to provide the elderly with dental services starting from June (treatment, prosthetic implant and other supportive interventions). This initiative is very important in terms of improving the quality of the elderly's life.

The staff of the Care Center and the beneficiaries regularly pass the Covid-19 test. An outbreak of the infection took place in the center in July, the virus was confirmed 56 beneficiaries and 16 employees. 5 elderly people died, 2 of which with chronic diseases incompatible with life, 3 with accompanying chronic serious diseases.

In cooperation with the Shirak branch of the National Center for Disease Control and Prevention, anti-epidemic measures were taken at the Center, due to which it was possible to limit the spread of the infection as much as possible.

At the beginning of August, there were no more patients in the Gyumri 24-hours Care Center.

Խնամառուները մեկուսացման մեջ էին դեռևս մարտի 16-ից: Ամեն շաբաթ կենտրոնի տարածքն ախտահանվում է Հայկական Կարմիր խաչի ընկերության կամավորների կողմից, անձնակազմն ու խնամառուները ապահովված են անհրաժեշտ պաշտպանիչ բոլոր միջոցներով: Մեկուսացման խիստ ռեժիմը շարունակվում է:

## Փախստականներ, ապաստան հայցողներ, փախստականի կարգավիճակ ունեցող անձինք

Covid -19 համավարակի օրերին փախստականների, ապաստան հայցողների, փախստականի կարգավիճակ ունեցող անձանց աջակցությունն իրականացվել է հեռավար ռեժիմով՝ գրասենյակում կուտակումներից խուսափելու համար:

Այս ընթացքում 8 լեզվով թարգմանվել և տարածվել են Պարետի որոշումներն ու վարակից պաշտպանվելու վերաբերյալ իրազեկման թերթիկները:

Բոլոր շահառուների հետ առցանց շարունակվել է հոգեբանական անհատական խորհրդատվությունը: Հեռավար ռեժիմով կազմակերպվել են նաև դասընթացներ:



Ընթացիկ ծրագրերի շրջանակներում շահառուներին տրամադրվող տան վարձի փոխատուցման և սննդի փաթեթի աջակցությունը, իրավիճակից ելնելով, տեղին էին և ծայրահեղ անհրաժեշտ:

Առավել խոցելի փաստականներն ըստ կարիքի ներառվել են Covid -19 համավարակի արձագանման ծրագրերում՝ ստանալով սնունդ և սոցիալ-հոգեբանական ծառայություն:

ՀՀ-ում ապրող մոտ 70 ապաստան հայցող և փախստական մայիսին և հունիսի սկզբին ստացան սննդի փաթեթներ:

## Աջակցություն տնային տնտեսություններին՝ անասնապահության ոլորտում

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը Գեղարքունիքի մարզում անասնապահության ոլորտում աջակցել է 32 տնային տնտեսությունների՝ տնտեսությունների երկարատև ինքնաբավ գործունեությանը նպաստելու նպատակով:

---

**Հայկական Կարմիր խաչի ընկերությունը՝ հաշվի առնելով համավարակի պատճառով խոցելի խմբերի վատթարացող սոցիալական վիճակը, ակտիվորեն շարունակում է իրականացնել տեղական և միջազգային ռեսուրսների հայթայթման գործընթաց:**

The Beneficaries have been in isolation since March 16. Every week the area of the center is disinfected by the volunteers of the Armenian Red Cross Society, the staff and the caregivers are provided with all the necessary protective means. The strict regime of isolation continues.

## Refugees, asylum seekers, persons with refugee status

During the days of the Covid-19 epidemic, assistance to refugees, asylum seekers and people with refugee status was provided remotely to avoid congestion in the office.

During this time, Commandant's decisions and anti-infection information materials were translated into eight languages and distributed.

Individual psychological counselling continued online with all beneficiaries. Remote courses were also organized.




The support of the house rent reimbursement and food package provided to the beneficiaries within the framework of the ongoing programs as appropriate, depending on the situation and was extremely necessary.

The most vulnerable refugees have been included in the Covid-19 response programs as needed, receiving food and social-psychological services.

About 70 asylum seekers and refugees living in the Republic of Armenia received food packages in May and early June.

## Assistance to households in the livestock sector

The Armenian Red Cross Society has assisted 32 households in the livestock sector in Gegharkunik region to promote long-term self-sufficiency.

---

**The Armenian Red Cross Society, taking into account the deteriorating social situation of vulnerable groups due to the pandemic, continues to actively pursue the process of obtaining local and international resources.**

Հետագա արձագանքի նպատակով՝ Հայկական Կարմիր խաչի ընկերությունը պլանավորել և իր գործընկերներին է դիմել մի շարք ծրագրերով, որոնք, հաստատվելուն պես, հնարավորություն կընձեռնեն ՀԿԽԸ-ին իրականացնել կարճաժամկետ (հրատապ), միջնաժամկետ և երկարաժամկետ արձագանքի գործառույթներ, հետևյալ ուղղություններով.

• Հումանիտար աջակցություն՝ սննդի և հիգիենիկ պարագաների տրամադրում մոտ 16000 մարդու:
• Հոգեբանական աջակցություն՝ հոգեբանական կենտրոնների և թեժ գծերի միջոցով:
• Բնակարանային վարձերի աջակցություն՝ մոտ 2800 մարդու (3-6 ամիս):
• Կանխիկ աջակցություն ձմեռնամուտին՝ հագուստի և կոշկեղենի ձեռք բերման նպատակով՝ մոտ 2000 մարդու:
• Կրթական պլանշետների տրամադրում՝ մոտ 1000 երեխայի:
• Ձմեռային ամիսներին կոմունալ վարձերի աջակցություն՝ մոտ 2000 ընտանիքի:
• Համայնքային և տնային տնտեսությունների զարգացում՝ գյուղատնտեսության և անասնապահության ոլորտին աջակցության միջոցով՝ մոտ 720 տնային տնտեսությունների:
• Բնակչության իրազեկման բարձրացում ՀՀ ողջ տարածքում՝ համաճարակին դիմակայելու և պաշտպանվելու համար:

Նշված ծրագրերից հուլիս ամսվա ընթացքում արդեն իսկ հաստատվել են հետևյալ ուղղությունները, որոնց իրագործման համար իրականացվում են պլանավորման և ցուցակների ճշգրտման աշխատանքներ.

• Հումանիտար աջակցություն. սննդի և հիգիենիկ պարագաների տրամադրում 6000 մարդու:
• Բնակարանային վարձերի աջակցություն 700 մարդու (3-6 ամիս):
• Կրթական պլանշետների տրամադրում 500 աշակերտի:

In order to implement further response the Armenian Red Cross Society has planned and applied to its partners a number of programs, which, once approved, will enable the ARCS to carry out short-term (urgent), medium-term and long-term response functions in the following areas:

• Humanitarian assistance: food and hygiene items for about 16,000 people.
• Psychological support through psychological centres and hotlines.
• Apartment rent assistance for about 2800 people (3-6 months).
• Cash support for winter to buy clothes and shoes for about 2000 people.
• Provision of educational tablets for about 1000 children.
• Utility bills during the winter months for about 2,000 families.
• Community and household development through support for agriculture and livestock sector: about 720 households.
• Raising public awareness throughout the Republic of Armenia to cope with the epidemic.

In July, the following directions have already been approved from the mentioned programs, for the implementation of which planning and list adjustment work are being carried out:

• Humanitarian assistance. Providing food and hygiene items to 6000 people.
• Housing assistance for 700 people (3-6 months).
• Providing educational tablets to 500 student.

**Մենք շնորհակալություն ենք հայտնում մեր միջազգային և տեղական նվիրատուներին՝ Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիային, Կարմիր խաչի միջազգային կոմիտեին, Դանիական, Շվեյցարական, Ավստրիական և Գերմանական Կարմիր խաչերին, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությանը, Եվրամիությանը, HSBC Հայաստանին, «Իզմիրլյան» հիմնադրամին, Ավստրիայի զարգացման գործակալությանը, Շվեյցարիայի զարգացման գործակալությանը և ՊեպսիԿո ընկերությանը:**

**«Իմ Քայլը» հիմնադրամին, «Միլքո» (ՓԲԸ), «Սևանի իշխան» (ՓԲԸ), «Սոնանուշ» (ՍՊԸ), «Գրին ֆարմեր» (ՍՊԸ), «Էկո ֆրեշ մաշրումս» (ՍՊԸ), «Ինգո Արմենիա» (ՍՊԸ), «Ագրո թրեյդ» (ՍՊԸ), «Գոլդեն բեյքրի», «Ռոյալ - Արմենիա», «Սմօգսոյոզ» ՍՊԸ, «Իքս» Գրուպ, Բայազեդ (ՍՊԸ), «Ռեֆրուտ» (ՍՊԸ), Արաքս թռչնաֆաբրիկա, Ջիէյթի Քաթթինգ աութդորս ընկերություն, Հայ Էլեկտրական ցանցեր կազմակերպություններին:**

**We are grateful to our international and local partners and donors:**
**International Federation of Red Cross and Red Crescent; International Committee of the Red Cross; Danish, Swiss, Austrian and German Red Cross; United States Agency for International Development; European Union; HSBC Armenia; "Izmirlian" Foundation; Austrian Development Agency; Swiss Development Agency and PepsiCo.**

**"My Step" Foundation, "Milko" (CJSC), " Sevani Ishkhan" (CJSC), "Sonanush" (LLC), "Green Farmer" (LLC), "Eco Fresh Mashrums" (LLC), "Ingo Armenia" ( LLC), "Agro Trade" (LLC), "Golden Bakery", "Royal - Armenia", "Smogsoyoz" LLC, "X" Group, Bayazed (LLC), "Refrut" (LLC), Araks Poultry Factory, GAT Cutting Outdoors Company, Armenian Electric Networks organizations.**



